

U u	a
F f	б
G g	г
T t	д
E e	е
Z z	з
È è	э
Ĉ ĉ	ə
Þ þ	th с придыханием
Ĵ ĵ	ж
Ĥ ĥ	и
L l	л
Ķ ķ	х
Ŧ ŧ	<u>тц</u>
Č č	к
Ķ ĥ	h
ǰ ǰ	<u>дз</u>
Ķ ĥ	<u>гх</u>
ǰ ǰ	<u>тч</u>
U u	м
ǰ ǰ	й
Ŧ ŧ	н
Š š	ш
Ŧ ŧ	во

ǰ ǰ	ч
Ŧ ŧ	п
ǰ ǰ	<u>дж</u>
Ŧ ŧ	твёрдая <u>pp</u>
U u	с
Č č	в
S s	т
Ŧ ŧ	мягкая р
ǰ ǰ	ц
Ŧ ŧ	<u>ph</u> с придыханием
Ŧ ŧ	<u>kh</u> с придыханием
Ŧ ŧ	hюн
O o	о
ǰ ǰ	ф

Лигатуры и дифтонги

Ŧ ŧ	у
Ŧ ŧ	ев
Ŧ ŧ	ю

Армянский язык с О. Туманяном

Пособие подготовила **Карине Арзуманян**

Метод чтения Ильи Франка

1. Непобедимый петух
2. Масленица
3. Кувшин золота
4. Бесхвостая лиса
5. У пирующего всегда будет пир
6. Лжец
7. Хозяин и работник
8. Козленок
9. Говорящая рыба
10. Братец топор
11. Путники
12. Два отца

ԲԱՐԵՇԵՆԴԱՆԸ (МАСЛЕННИЦА)

Ժամանակով մի մարդ ու մի կնիկ են լինում: (было время, когда один муж и одна жена бывают = жили когда-то муж с женой; *Ժամանակ* — время, *Ժամանակով* — было время, когда; *մարդ* — человек; *мужчина; муж*; *կնիկ* — разг. от *կին* баба, женщина; жена).

Էս մարդ ու կնիկը (эти муж и жена) իրար հավանելիս չեն լինում:
(друг другу нравиться не бывают = не нравились друг другу, не по
праву один другому; *հավանել* — *одобрять; нравиться*).

Մարդը կնկանն է ասում հիմար, (муж жене говорил глупая/тупая;
հիմար — *глупый, тупой, тупоумный; կնկանն* (ед. ч. дат. пад.
определ. арт.) *от կնիկ* — *жена*), կնիկը մարդուն, (а жена мужу
/говорила тупой/) ու միշտ կռվելիս են լինում: (и всегда
ссорящимися бывают = ссорились /они/).

Մի օր էլ մարդը մի քանի փութ եղ ու բրինձ է առնում, (в один день
же муж несколько фунтов масла и риса покупает; *առնել* — *покупать;
приобретать*), տալիս մշակի շալակը (на спину носильщика
взваливает; *մշակի* (ед. ч. род. пад.) *от մշակ* — *носильщик; շալակ*
— *заплечье, տալ* — *давать, подать, շալակ տալ* — *взваливать на
спину*), տանում տուն: (несет домой; *տանել* — *уносить, увозить*)

Ժամանակով մի մարդ ու մի կնիկ են լինում:

Էս մարդ ու կնիկը իրար հավանելիս չեն լինում:

Մարդը կնկանն է ասում հիմար, կնիկը մարդուն, ու միշտ
կռվելիս են լինում:

Մի օր էլ մարդը մի քանի փութ եղ ու բրինձ է առնում, տալիս
մշակի շալակը, տանում տուն:

Կինը բարկանում է. (жена сердится/злится/гневаётся; *բարկանալ* —
сердиться, злиться, гневаться)

— Ա՛յ, որ ասում եմ հիմար ես, չես հավատում, (вот когда говорят, что дурак ты, не веришь; *հավատալ* — *верить, доверять*) էսքան եղն ու բրինձը միանգամից (столько масла и риса сразу; *էսքան* — *разг. от шարան* — *столько*) ինչի՞ համար ես առել բերել, (для чего ты купил принес?; *առնել* — *покупать; брать; получать; բերել* — *приносить, привозить*) հորդ քե՛լեխն ես տալիս (отца своего поминки даешь = справляешь; *քե՛լեխ* — *поминки*), թե տղիդ հարսանիքն ես անում: (или сына своего свадьбу делаешь = справляешь; *հարսանիք* — *свадьба; տղիդ* (*ед. ч. род. пад. притяж. арт. 2 лица*) *от տղա* — *сын*)

— Ի՞նչ քե՛լեխ, ի՞նչ հարսանիք, (какие поминки, какая свадьба?) այ կնիկ, ի՞նչ ես խոսում, (ах, баба, что ты говоришь?) տար պահի, (унеси сбереги = припрядь; *պահել* — *хранить; держать; беречь*) բարեկենդանի համար է: (для барекендана = на барекендан; *համար* — *для; чтобы; ради; барекендан* — *армянская масленица*)

Կինը հանգստանում է, տանում է պահում: (жена успокаивается, уносит прячет; *հանգստանալ* — *успокаиваться; отдыхать; утихомириваться*)

Կինը բարկանում է.

— Ա՛յ, որ ասում եմ հիմար ես, չես հավատում, էսքան եղն ու բրինձը միանգամից ինչի՞ համար ես առել բերել, հորդ քե՛լեխն ես տալիս, թե տղիդ հարսանիքն ես անում:

— Ի՞նչ քե՛լեխ, ի՞նչ հարսանիք, այ կնիկ, ի՞նչ ես խոսում, տար պահի, բարեկենդանի համար է:

Կինը հանգստանում է, տանում է պահում:

Անց է կենում միառժամանակ, (проходит некоторое время; *անց կենալ = անցնել — проходить, проезжать*) էս կնիկը սպասում է, սպասում է, (эта жена ждет, ждет; *սպասել — ждать*) բարեկենդանը գալիս չի: (барекендан не приходит; *գալ — приходиться, приезжать; наступать; прибывать*) Մի օր էլ շեմքումը նստած է լինում, (в один день же у порога сидячей бывает = сидит) տեսնում է մի մարդ (видит один человек; *տեսնել — видеть, смотреть; понимать*) վռագ-վռագ փողոցով անց է կենում: (быстро-быстро = торопливо по улице идет; *փողոց — улица*) Ձեռք դնում է ճակատին (руку кладет на лоб; *ձեռ (сокр. от ձեռք) — рука; кисть; ճակատին (ед. ч. мест.над.) от жакату — лоб; фасад; фронт*) ու ձեն տալի. (и зовет/кричит)

— Ա՛խպեր, ա՛խպեր, հալա մի կանգնի: (братец/брат, братец, а ну-ка остановись; *հալա — пока, еще; а ну-ка; կանգնել — остановиться; подняться, вставать*)

Տղեն կանգնում է: (парень останавливается; *տղա — мальчик; ребенок, дитя; сын*)

— Ա՛խպեր, բարեկենդանը դու հո չէ՞ս: (братец, барекендан не ты ли?)

Անց է կենում միառժամանակ, էս կնիկը սպասում է, սպասում է, բարեկենդանը գալիս չի: Մի օր էլ շեմքումը նստած է լինում, տեսնում է մի մարդ վռագ-վռագ փողոցով անց է կենում: Ձեռք դնում է ճակատին ու ձեն տալի.

— Ա՛խպեր, ա՛խպեր, հալա մի կանգնի:

Տղեն կանգնում է:

— Ա՛խպեր, բարեկենդանը դու հո չե՞ս:

Անցվորականը նկատում է (прохожий замечает; *նկատել* — *замечать, наблюдать, приметить, подметить*), որ էս կնկա ծալը ւալա է, (что у этой женщины извилины не хватает = не все дома; *ծալ* — *загиб; складка; извилина; ւալա* — *недостающий; неполный; неудовлетворительный, чокнутый; ծալը ւալա* — *не все дома*) ասում է՝ հա՛ ասեմ, (говорит = думает: скажу «да») տեսնեմ ինչ է դուրս գալի: (посмотрю, что получится/выйдет /из этого/; *դուրս գալ* — *выходить, выезжать; получиться, выйти*)

— Հա, էս եմ բարեկենդանը, քույրիկ ջան, ի՞նչ էս ասում: (да, я барекендан, сестрица джан = милая сестрица, что ты говоришь?; *джан* — *душа; тело; жизнь; дорогой, милый*)

— Էն եմ ասում, (а то говорю) որ մենք քո ծառան հո չենք, (что мы тебе не слуги же) որ քո եղն ու բրինձը ւախենք: (чтобы твои масло и рис хранить) Ինչ որ ւախեցինք, հերիք չե՞... (сколько хранили, не хватит?; *հերիք* — *довольно, достаточно, хватит*) չէս ամաչն՞ում... (не стыдишься = не стыдно тебе?; *ամաչել* — *стыдиться; стесняться*) Ընչի՞ չէս գալի քո ապրանքը տանում... (почему не приходишь свой товар не забираешь?; *ապրանք* — *имущество; товар*)

— Դե էլ ի՞նչ էս նեղանում, քույրիկ ջան, (ну зачем же ты обижаешься, сестрица джан; *նեղանալ* — *обижаться, дуться*) էս էլ հենց դրա համար եմ եկել, (я же как-раз за этим и пришел) ձեր

տունն էի ման գալի, չէի գտնում: (ваш дом искал, не находил = не мог найти; *ման գալ* — *искать*; *շуլտ*; *գտնել* — *находить, отыскать; приобрести*).

— Դե արի տար: (ну иди бери).

Անցվորականը նկատում է, որ էս կնկա ծալը պակաս է, ասում է՝ հա՛ ասեմ, տեսնեմ ինչ է դուրս գալի:

— Հա, էս եմ բարեկենդանը, քույրիկ ջան, ի՞նչ էս ասում:

— Էն եմ ասում, որ մենք քո ծառան հո չենք, որ քո եղն ու բրինձը պահենք: Ինչ որ պահեցինք, հերիք չէ՞... չես ամաչո՞ւմ... Ընչի՞ չես գալի քո ապրանքը տանում...

— Դե էլ ի՞նչ էս նեղանում, քույրիկ ջան, էս էլ հենց դրա համար եմ եկել, ձեր տունն էի ման գալի, չէի գտնում:

— Դե արի տար:

Էս մարդը ներս է մտնում, (этот человек внутрь входит) սրանց եղն ու բրինձը շալակում (их масло и рис на спину взваливает; *շալակել* — *взваливать на спину*) ու կրունկը դեսն է անում, (и пятками) երեսը դեպի իրենց գյուղը: (лицом к своей деревне)

Մարդը գալիս է տուն, (муж приходит домой) կնիկն ասում է. (жена говорит)

— Հա , էն բարեկենդանն եկավ, (да, тот барекендан приходил) իր բաները իրեն սևցրի տարավ: (его вещи ему швырнула, унес; *բան* (ед. ч.) (*բաները* — *мн. ч.*) — *вещь, предмет*)

— Ի՞նչ բարեկենդան... ի՞նչ բաներ... (какой барекендан, какие вещи?)

— Ա՛յ էն եղն ու բրինձը... (то масло и рис) Մին էլ տեսնեմ՝ (вдруг вижу) վերևից գալիս է. (сверху идет) մեր տունն էր ման գալի, (наш дом искал) կանչեցի, մի լավ էլ խայտառակ արի, (позвала /его/, хорошенько позорным сделала = отругала; *խայտառակ անել* — *опозорить, оскандалить, осрамить*) շալակը տվի տարավ: (на спину /ему/ взвалила, унес)

Էս մարդը ներս է մտնում, սրանց եղն ու բրինձը շալակում ու կրունկը դեսն է անում, երեսը դեպի իրենց գուղը:

Մարդը գալիս է տուն, կնիկն ասում է.

— Հա , էն բարեկենդանն եկավ, իր բաները իրեն սևցրի տարավ:

— Ի՞նչ բարեկենդան... ի՞նչ բաներ...

— Ա՛յ էն եղն ու բրինձը... Մին էլ տեսնեմ՝ վերևից գալիս է. մեր տունն էր ման գալի, կանչեցի, մի լավ էլ խայտառակ արի, շալակը տվի տարավ:

— Վայ քու անխելք տունը քանդվի, (вай, чтобы твой тупой дом разрушился = тупая голова разрушилась) որ ասում եմ հիմար ես՝ հիմար ես էլի... (когда говорю ты тупая, тупая значит) Ո՞ր կողմը գնաց: (в какую сторону пошел?)

— Այ էն կողմը: (вон в ту сторону).

Էս մարդը ձի է նստում, (этот муж на лошадь садится; *նստել* — *сидеть; восседать, оседать*) ընկնում բարեկենդանի ետևից: (пускается за барекенданом).

Ճանապարհին բարեկենդանը ետ է մտիկ անում, (по дороге барекендан назад оглядывается) տեսնում է՝ մի ձիավոր քշած գալիս է: (видит один всадник погоняющий /лошадь/ едет; *քշել* — *гнать, погонять*). Գլխի է ընկնում, (в голову /ему/ приходит) որ սա էն կնկա մարդը պետք է լինի: (что это той женщины муж должен быть).

— Վայ քու անխելք տունը քանդվի, որ ասում եմ հիմար ես՝ հիմար ես էլի... Ո՞ր կողմը գնաց:

— Այ էն կողմը:

Էս մարդը ձի է նստում, ընկնում բարեկենդանի ետևից:

Ճանապարհին բարեկենդանը ետ է մտիկ անում, տեսնում է՝ մի ձիավոր քշած գալիս է: Գլխի է ընկնում, որ սա էն կնկա մարդը պետք է լինի:

Գալիս է հասնում իրեն: (приезжает-доезжает до него).

— Բարի օր, ախպերացու: (добрый день, братец)

— Աստծու բարին: (Бога добро = день добрый)

— Հո էս ճամփովը մարդ չի անցկացա՞վ: (а по этой дороге человек не проходил?; *ճամփովը* (ед. ч. дат. пад.) *от ճամփա* — *дорога*)

— Անցկացավ: (проходил)

— Ի՞նչ ունե՞ր շալակին: (что у него на спине было?)

— Եղ ու բրինձ: (масло и рис)

— Հա, հենց էդ եմ ասում: (да, вот про это и говорю) Ի՞նչքան ժամանակ կլինի: (сколько время будет = прошло?)

— Բավականին ժամանակ կլինի: (достаточно времени будет).

Գալիս է հասնում իրեն:

— Բարի օր, ախպերացու:

— Աստծու բարին:

— Հո էս ճամփովը մարդ չի անցկացա՞վ:

— Անցկացավ:

— Ի՞նչ ուներ շալակին:

— Եղ ու բրինձ:

— Հա, հենց էդ ես ասում: Ի՞նչքան ժամանակ կլինի:

— Բավականին ժամանակ կլինի:

— Որ ձին քշեմ՝ կհասնե՞մ: (если на лошади поскачу, успею?;
հասնել — *успевать, догонять*)

— Ո՞րտեղից կհասնես, (откуда успеешь?) դու ձիով, նա ոտով: (ты на лошади, он на ногах). Մինչև քու ձին չորս ոտը կփոխի՝ (пока твоя лошадь четыре ноги сменит; *փոխել* — *менять; обменивать; сменить*) մի՛ն, երկո՛ւ, երե՛ք, չո՛րս, (один, два, три, четыре) նա երկու ոտով (он двумя ногами) մե՛կ-երկո՛ւ, մե՛կ-երկո՛ւ, մե՛կ-երկո՛ւ, (раз-два, раз-два, раз-два) շուտ-շուտ կգնա, անց կկենա: (быстро-быстро пойдет, пройдет; *անց կենալ, անցնել* — *проходить*).

— Բա ի՞նչպես անեմ: (а как мне сделать = быть?)

— Ինչպես պետք է անես, (как надо тебе делать) ուզում ես, ձիդ թող ինձ մնա, (хочешь, лошадь свою оставь у меня; ուզել — хотеть,

желать) դու էլ նրա պէս ոտով վազի, (ты же как он на ногах побеги; *վազել* — *бежать, пробежать*) գուցէ հասնես: (может, успеешь).

— Հա՛, էդ լավ ես ասում: (да, это хорошо говоришь ты).

— Որ ձին քշեմ՝ կհասնե՞մ:

— Ո՞րտեղից կհասնես, դու ձիով, նա ոտով: Մինչև քու ձին չորս ոտը կփոխի՝ մի՛ն, երկո՛ւ, երե՛ք, չո՛րս, նա երկու ոտով մե՛կ-երկո՛ւ, մե՛կ-երկո՛ւ, մե՛կ-երկո՛ւ, շուտ-շուտ կգնա, անց կկենա:

— Բա ի՞նչպէս անեմ:

— Ինչպէս պետք է անես, ուզում ես, ձիդ թող ինձ մոտ, դու էլ նրա պէս ոտով վազի, գուցէ հասնես:

— Հա՛, էդ լավ ես ասում:

Վեր է գալիս, (вниз сходит) ձին թողնում սրա մոտ (лошадь оставляет у него; *թողնել* — *оставлять; пускать; бросить; допускать; выпускать*) ու ոտով ճանապարհ ընկնում: (и на ногах = пешком по дороге пускается). Սա հեռանում է թէ չէ, (этот отдалается или нет = не успел этот отдалиться; *հեռանալ* — *отдалиться; уходить*) բարեկենդանը շալակը բարձում է ձիուն, (барекендан на спине взваливается лошади; *բարձել, բարնալ* — *нагрузить, погрузить на что-нибудь; ձիուն (ед. ч. винит. пад.) от ձի* — *лошадь*) ճամփեն ծոռւմ, քշում: (с дороги сворачивает, скачет; *ծռել* — *кривить, изменить направление*).

Էս մարդը ոտով գնում է, գնում, (этот муж пешком идет, идет) տեսնում է չհասավ, (видит, не дошел) ետ է դառնում: (назад

возвращается; ետ դառնալ — вернуться, возвратиться). Ետ է դառնում, (назад возвращается) տեսնում՝ ձին էլ չկա: (видит лошади тоже нет). Գալիս է տուն: (приходит домой) Նորից սկսում են կռվել, (заново начинают ссориться; սկսել — начинать, зачинать; կռվել — ссориться; драться, бороться; сражаться) մարդը եղ ու բրնձի համար, (муж из-за масла и риса; բրնձի (ед. ч. род. пад.) от բրնձ — рис) կնիկը ձիու: (жена из-за лошади).

Մինչև օրս էլ (до наших дней же) էս մարդ ու կնիկը (эти муж и жена) կռվում են դեռ: (ругаются еще) Սա նրան է ասում հիմար, (он ей говорит глупая) նա սրան, (она ему) իսկ բարեկենդանը լսում է ու ծիծաղում: (а барекендан слушает и смеется; ծիծաղել — смеяться, улыбаться).

Վեր է գալիս, ձին թողնում սրա մոտ ու ոտով ճանապարհ ընկնում: Սա հեռանում է թե չէ, բարեկենդանը շալակը բարձում է ձիուն, ճամփեն ծռում, քշում:

Էս մարդը ոտով գնում է, գնում, տեսնում է չհասավ, ետ է դառնում: Ետ է դառնում, տեսնում՝ ձին էլ չկա: Գալիս է տուն: Նորից սկսում են կռվել, մարդը եղ ու բրնձի համար, կնիկը ձիու:.

Մինչև օրս էլ էս մարդ ու կնիկը կռվում են դեռ: Սա նրան է ասում հիմար, նա սրան, իսկ բարեկենդանը լսում է ու ծիծաղում:

Полностью книгу можно купить на сайте www.franklang.ru в соответствующем языковом разделе (армянский язык), в подразделе «Тексты на армянском языке, адаптированные по методу чтения Ильи Франка»

